ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)

*Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ Ֆելիքս Վազգենի Մովսիսյանի 65-ամյակը:*

*Ֆ. Մովսիսյանը ծնվել է 1952 թ. հունիսի 16-ին՝ Կիրովական (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: 1969 թ. ավարտել է քաղաքի Ստ. Շահումյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը: 1970 թ. ընդունվել է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է գերազանցության դիպլոմով:*

*1974 թ. սեպտեմբերին ընտրվել է մանկավարժական ինստիտուտի ԼԿԵՄ կոմիտեի առաջին քարտուղար և միաժամանակ դասախոսել բուհում: 1975 թ. դեկտեմբերին ընտրվել է ՀԼԿԵՄ Կիրովականի քաղկոմի քարտուղար: 1976 թ. օգոստոսին գործուղվել է Մոսկվա, որտեղ սովորել է ՀամԼԿԵՄ Կենտկոմին կից բարձրագույն կոմերիտական դպրոցում: Գերազանցության դիպլոմով ավարտելով դպրոցը՝ ստացել է բարձրագույն քաղաքական կրթություն: 1978 թ. ապրիլից 1979 թ. օգոստոսն աշխատել է ՀԼԿԵՄ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնում: 1979 թ. օգոստոսին ընտրվել է ՀԼԿԵՄ Կիրովականի քաղկոմի երկրորդ քարտուղար, իսկ 1980 թ. դեկտեմբերին՝ առաջին քարտուղար: 1982 թ. հունվարին տեղափոխվել է կուսակցական աշխատանքի ՀԿԿ Կիրովականի քաղկոմում. 1982–1985 թթ. եղել է քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, այնուհետև՝ կուսակցական-կազմակերպական բաժնի վարիչի տեղակալ: 1987 թ. ընտրվել է ՀԿԿ Կիրովականի քաղկոմին առընթեր կուսակցական հանձնաժողովի նախագահ:*

*Կոմերիտական և կուսակցական աշխատանք կատարելու տարիներին ընտրվել է ՀԼԿԵՄ Կենտկոմի անդամ, ՀԼԿԵՄ 28-րդ և 29-րդ համագումարների պատգամավոր, ՀԿԿ Կիրովականի քաղկոմի բյուրոյի անդամ, ՀԿԿ 27-րդ համագումարի պատգամավոր: 1980–1995 թթ. ընտրվել է Կիրովականի,*

*արդեն անվանափոխված Վանաձորի քաղաքային խորհրդի մի քանի գումարումների պատգամավոր: Բարեխիղճ աշխատանքի համար բազմիցս պարգևատրվել է վերադաս մարմինների կողմից:*

*1991–1993 թթ. աշխատել է «Բազում» արտադրական միավորման գլխավոր տնօրենի տեղակալ: 1996 թ. մայիսին ընտրվել է Վանաձորի քաղաքային խորհրդի գործկոմի քարտուղար: Նույն թվականի հոկտեմբերին նշանակվել է Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար և այդ պաշտոնում աշխատել մինչև 1999 թ. նոյեմբեր:*

*1993 թ. սեպտեմբերից առ այսօր դասավանդում է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնում:*

*1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ հասարակական միտքը 1830–1860-ական թվականների լեհական ազատագրական պայքարի մասին» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2002 թ. նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում:*

*2005 թ. Ֆ. Մովսիսյանը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «XIX դարի առաջին կեսի եվրոպական ազգային-ազատագրական շարժումները և հայ հասարակական միտքը» թեմայով ու ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2007 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:*

*2010 թ. փետրվարից Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ համալսարանի, ՎՊՀ) պատմության ամբիոնի վարիչն է: Ուսումնագիտական անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է մանկավարժական ինստիտուտի ոսկե մեդալով:*

*Պրոֆ. Ֆ. Մովսիսյանի գիտական ուսումնասիրությունների շրջանակն ինքնատիպ է և բավական լայն, որը վերաբերում է XVIII–XIX դդ. եվրոպական ու ամերիկյան հեղափոխություններին, ազգային-ազատագրական շարժումներին և դրանց վերաբերյալ հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատականներին: Դա անչափ տարողունակ և աշխատատար աշխատանք է, որը պահանջում է հայոց ու համաշխարհային պատմությունների համադրված իմացություն: Խնդիրը բարդ է նաև ուսումնասիրվող թեմայի մեծ ծավալի պատճառով:*

*2002 թ. լույս տեսած «Հայ հասարակական միտքը և պարբերական մամուլը XIX դ. լեհական ազգային-ազատագրական պայքարի մասին» մենագրությունն իր բնույթով եզակի է հայ պատմագրության մեջ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Համ-*

*բարյանը, վերլուծելով այս մենագրությունը, գրում է. «Ֆ. Վ. Մովսիսյանի ուսումնասիրությունը միանգամայն հաջողված գործ է, որը շարադրված է փաստական հարուստ նյութի հիման վրա: Այն նոր խոսք է հայ պատմագիտության մեջ և հարստացնում է լեհական 1830–1860-ական թվականների ազատագրական պայքարի պատմությունը՝ ինքնատիպ ու ուրույն հետազոտությամբ»:*

*2004 թ. հրատարակած «Եվրոպական ազգային-ազատագրական շարժումները հայ պարբերական մամուլում 1848–1852 թթ.» ստվարածավալ մենագրությունում (655 էջ) Ֆ. Մովսիսյանը XIX դարում լույս տեսած հայ պարբերականների հրապարակումների հիման վրա ամփոփ և հանգամանորեն ներկայացնում է եվրոպական քսանից ավելի ժողովուրդների 1848–1852 թթ. ազգային-ազատագրական շարժումներն ու պարբերականներից յուրաքանչյուրի դիրքորոշումը դրանց նկատմամբ: Պատմաբանը եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներն ու պայքարը լուսաբանելիս ձերբազատվել է պատմագրության մեջ երկար տարիներ իշխող այն տեսակետից, թե պատմական իրադարձությունները պետք է շարադրել ու գնահատել դասակարգային մոտեցում ցուցաբերելով: Անտեսելով այդ մոտեցումը՝ Ֆ. Մովսիսյանը եվրոպական ճնշված ժողովուրդների պայքարը շարադրել է դրանց բնականոն ընթացքին համապատասխան և ազգային խնդիրների տեսանկյունից: Բացի այդ, հեղինակը հայ հասարակական հոսանքների դիրքորոշումները բացահայտելիս չի առաջնորդվել մեր պատմագրության մեջ դրանց վերաբերյալ երկար ժամանակ գերիշխող գնահատականով և դրսևորել է սեփական մոտեցում: Մենագրության գրախոս Ա. Խառատյանի կարծիքով՝ «ընթերցողը կարող է չափազանց ուշագրավ և հետաքրքիր փաստեր ու տեղեկություններ քաղել հայ պարբերականների էջերում լուսաբանված եվրոպական ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ: Մի բան, որն այդպիսի մանրամասնություններով իր տեսակի մեջ առայժմ առաջինն է»:*

*2006 թ. հրատարակված «XIX դարի առաջին կեսի եվրոպական ազգային-ազատագրական շաժումները և հայ հասարակական միտքը» ստվարածավալ (608 էջ) մենագրությունը ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հաստատել է որպես բուհական ուսումնական ձեռնարկ: Գրքի գիտական խմբագիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Բարխուդարյանի կարծիքով՝ Ֆ. Մովսիսյանի ուսումնասիրությունը «…հայ պատմագրության կողմից չուսումնասիրված խնդիրներից է և գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ի տարբերություն խորհրդային պատմագրության, որը XIX դարի այդ իրադարձությունե-*

*ը դիտարկում էր որպես հեղափոխություններ և ապստամբություններ, հեղինակն իրավացիորեն դրանք գնահատում է որպես ազգային-ազատագրական շարժումներ, որոնք նպատակ էին հետապնդում թոթափել օտարի տիրապետությունը և ձեռք բերել անկախություն ու ազատություն: Եզակի այս աշխատանքը լուրջ ներդրում է հայ պատմագրության մեջ»:*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Անանյանի կարծիքով՝ «գրքի հեղինակը հսկայածավալ աշխատանք է կատարել» XIX դարի հայ պարբերական մամուլում եվրոպական ազատագրական շարժումների վերաբերյալ հրապարակումները բացահայտելու, լուսաբանելու և վերլուծելու ուղղությամբ: Նա միաժամանակ անդրադարձել է հայ նոր գրականությունում հիմնախնդրի արծարծումներին, բացահայտել հայության երկու հատվածների՝ արևմտահայերի ու արևելահայերի պատմական ճակատագրերի զարգացման հեռանկարների վրա եվրոպական ազգային-ազատագրական շարժումների ունեցած ազդեցության իր ընկալմանը: Գ. Անանյանը գրում է. «Պարզապես զարմանալ կարելի է հեղինակի գիտական բարեխղճության և աշխատասիրության վրա: 19-րդ դարի հայ ամբողջ պարբերական մամուլը և հայ նոր գրականությունը ուսումնասիրել և դրա հիման վրա հիմնարար աշխատություն գրելը մեկ մարդու ուժերից վեր բան է, բայց Ֆ. Մովսիսյանը կարողացել է դա անել: Նա, ով երբևէ գործ է ունեցել հայ պարբերական մամուլի հետ, կարծում եմ, կհամաձայնի ինձ հետ, որ գրքի հեղինակը տաժանակիր աշխատանք է կատարել»:*

*2015 թ. հրատարակված «Մասոնները և ամերիկյան հեղափոխությունը» երկհատոր ծավալուն (հ. 1, 743 էջ, հ. 2, 583 էջ) մենագրությունը (գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյան) վերաբերում է հայ պատմագիտությունում երբևէ չլուսաբանված մի խնդրի: Ֆ. Մովսիսյանը տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքում ուսումնասիրել է հսկայական քանակությամբ գրականություն և դրա վերլուծության հիման վրա ստեղծել կուռ կառուցվածքով ամբողջական մի աշխատանք: Նրան հաջողվել է ամերիկյան պատմության երկու հիմնարար թեմա (անկախության հռչակումը և պետության ստեղծումն ու մասոնության գործունեությունը) միմյանց փոխկապակցելով՝ ներկայացնել որպես հետազոտության ինքնուրույն հիմնախնդիր: Սա պատմագիտական նորույթ է: Մենագրությունում կարևոր տեղ է հատկացված ամերիկյան անկախության համար պայքարին եվրոպական մասոնների և ժողովուրդների, այդ թվում՝ լեհահայերի մասնակցությանը: Առանձին գլուխ է նվիրված ամերիկյան նախագահների մասոնական գործունեության*

*վերլուծությանն ու գնահատականին և ԱՄՆ գլխավորությամբ նոր համաշխարհային կարգ հաստատելու գաղափարի իրականացմանը:*

*Պրոֆ. Ֆ. Մովսիսյանի ղեկավարած ՎՊՀ պատմության ամբիոնը համագործակցում է հայագիտական մի շարք կենտրոնների և բուհերի պատմության ամբիոնների հետ: Ամբիոնը ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, Պատմության և Արևելագիտության ինստիտուտների հետ համատեղ կազմակերպել է գիտաժողով՝ նվիրված 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90-ամյակին: Միջազգային կապերի շրջանակում ճանաչված պատմաբանը 2015 թ. հոկտեմբեր-նոյեմբերին դասավանդել է Լեհաստանում, Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի պատմության ֆակուլտետում:*

*Ֆ. Մովսիսյանն ուշագրավ զեկուցումներով հանդես է եկել «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովում (2013 թ.), «Հայաստանը և եվրասիական ինտեգրումը» (2014 թ.), «Առաջին աշխարհամարտ. մոռացված հաղթանակներ» (2014 թ.), «Առաջին աշխարհամարտն ու հայ ժողովուրդը» (2014 թ.), «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը: Հայագիտության արդի հիմնախնդիրներ» (2016 թ.), «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» (2016 թ.) միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովներում:*

*Ֆ. Մովսիսյանը գիտամանկավարժական գործունեությունը համատեղում է հասարակական ակտիվ աշխատանքի հետ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդի, Վանաձորի պետական համալսարանի գիտական խորհրդի և «Հայաստանի պատմագետների միության» խորհրդի անդամ է:*

*Շնորհավորելով մեր գործընկերոջը՝ մաղթում ենք նրան արևշատություն, անձնական երջանկություն, նորանոր նվաճումներ ու ձեռքբերումներ գիտական, մանկավարժական ու հասարակական գործունեության մեջ:*

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ